Յովհաննէս Բաղալեան Երաժշտական Հիմնադրամի առաքելութիւնն է վառ պահել երգչի երազը՝ փոխանցելով այն որպէս ժառանգութիւն՝ ապագայ սերունդներին: Մեծ վարպետի տենչն էր «լսել հայ երգը ամեն մի հայ օջախից, ուր էլ որ ապրում է հայը:»

Նա ընդգրկեց այս երազը իր արուեստի մէջ, խօսքի մէջ և մասնաւորաբար իր գործի մէջ ուր որպէս ուսուցիչ հայ երգի հետ միասին նա ներշնչեց նոր սերունդներին ազգային շնչով: Նրա համար հայ երգը այն սիւներից մինն է, որի վրայ յաւէրժապէս կանգնած է հայ մշակոյթը՝ հզօր ու փառաւոր:

Հիմնադրամից կարող են օգտուել ամենուրէք այն ուսանողները որոնք զբաղւում են հայկական երաժշտութեամբ՝ լինի դա երաժշտական դպրոցում կամ անհատ ուսուցչի մօտ: Իւրաքանչիւր թեկնածու նիւթական կարիքների հետ միասին պէտք է նաև գնահատւի իր ուսուցչի կամ դպրոցի վարչական կազմի կողմից: Հիմնադրամը օժանդակում է նաև երաժշտութեան ուսուցիչներին ինչպէս նաև այն անձերին ու կազմակերպութիւններին որոնք ստեղծում են ժողովրդական երաժշտական գործիքներ, երաժշտութիւն ու գրքեր ուսանողների համար: